

1843 ԲՍՁՄԱՎԷՊ 1910

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Տ Ո Ր
Կ Ը
Հ Ո Վ Տ Ե Մ
Թ. 10

ԱՊՐԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱՆՈՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ
Ճ Ճ Ճ Ճ Ճ Ճ ԱՐԹԱԹԵՐԹ Ճ Ճ Ճ Ճ Ճ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

Մ Ի Ջ Ն Ա Դ Ա Ր Ե Ա Ն

Հ Ա Յ Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Շ Ն Ե Ր

Շատ անգամ կրկնուած է՝ թէ դեռ հայ բանասիրութեան կանառին մէջ գրեթէ անծանօթ մնացած են մեր միջնադարեան բանաստեղծները:

Հայկական ընտրը՝ որ ընդհանրապէս կաթողիկէներու ներքե՝ երկինքը նուազած է, Միջին դարու մէջ կը սկսի նոր ուղղութիւն մ'առնել. կամ, աւելի ճիշդ, նոր ճիւղ մը ևս կը բողբոջէ այն հին սրբազան ծառին վրայ:

Արարական և պարսկական ազդեցութեան տակ՝ աշխարհիկ գոյնը, որ միշտ պէտք է ժողովրդեան մէջ գոյութիւն ունեցած ըլլայ - բայց որ ծածուկ մնաց ապագաներէն իրրե երկարագոյն գոյութեան մը անարժան, - հետզհետէ կը խտանայ և կը ծաւալի:

Այն շրջանն է սա, ուր բանաստեղծութիւնը ձանձրացած վանքերու միայնութեանէն՝ սկսաւ դէպ ի ամբոխը իջնել: Բայց այս փոփոխութիւնը ստուկ առարկայական եղաւ, որովհետեւ բանաստեղծները շարու-

նակեցին ի սկզբան եկեղեցական մնալ. այսպէս՝ հայ բանաստեղծութիւնը կարևոր քայլ մ'առած չէր, վասն զի երգիչները աղբիւր ունէին իրենց երգին բան մը՝ որ իրենց անձը չէր, հետևաբար չէր կրնար յուզումալից և անկեղծ ըլլալ. արհեստական նկարագիրը մնաց. բայց սովորեցան նաև աշխարհիկ երգիչները չարհամարհել այն 'նիթերը' որ եկեղեցականներու ալ անարժան չէին թուել:

Մեր նախնիք թողուցին մեզի իրենց երգերը տաղարաններու մէջ ամփոփած, և մենք չգրադեցանք անոնցմով. մանաւանդ մեզմէ զար մ'առաջ՝ արհամարհուեցան այդ ձեռագիրները, և շատերը խղճամիտներու գոհ գացին:

Ազգի մը մատենագրութեան պատմութեան ամենէն պատուաբեր գլուխը կը բացուի բանաստեղծութեան, սրտի գրականութեան տեսութեամբ և ուսումնասիրութեամբ: Ազգի մը հոգեբանութեան նըկարն է բանաստեղծութիւնը և գեղարուեստի ամենէն փափուկ և զգայուն ճիւղը:

Դեռ մենք մեր ազգին հոգեբանական պատմութիւնը չունինք և պիտի չկարենանք ունենալ երբեք, մինչև որ չմշակուի հայ բանաստեղծերու ուսումնասիրութիւնը:

Հ Ո Վ Տ Ե Մ Բ Ե Ր 1910

Այսպիսի ազգի մը հոգեբանական պատմութիւնը՝ հայեիլին է՝ որուն մէջ կարելի է նկատել ազգ մը իր ցեղային յոռի բարքերով և առանձնայատկութեամբ: Եւ այդ ամենահարկաւոր զէնքն է ազգի մը ապագայ գոյութեան: Ամենէն մեծ գիտութիւնն է «Մանիր գրեց»:

Միջին դարու այդ գեղարուեստական արտագրութիւնները՝ հայկական մատենագրութեան մէջ բարձր տեղ մը պէտք էին գրաւել. բայց, ցաւալի է ըսել, որ հոն շատեր և ոչ իսկ յանուանէ կը յիշուին: Բանասէրք ամայի թողած են գերեզմանները անոնց՝ որոնցմէ ոմանք տաղանդաւոր կրնային կոչուիլ:

Հ. Գ. Զարհանալեանի Մատենագրութեան մէջ ընդարձակ էջեր գրաւած են պատմագիրները, ժամանակագիրները, մեկնիչները և այլն, նոյն իսկ նամակագիր մը. ընդհակառակն շատ քիչ բան նուիրուած է հայ թերթիներու վրայ:

Կէս դարէն աւելի առաջ՝ Արշալոյս արարտեան թերթը (թիւ 151) փափագ յայտնեց որ (Սրագիրներու և Հանդէսներու միջոցաւ հրատարակուին Միջին դարէն մնացած բանաստեղծութիւնները. իազմովէպը իր ծննդեան առաջին տարւոյն մէջ՝ իրագործեց այդ փափագը (1843 էջ 333) և բաւական տարի շարունակեց: Ուրիշ ազգագրական Հանդէսներ ևս հետեւեցան իազմովէպի, և Կեր. Գար. եպ. Սրուանձտեանց իր ճանապարհորդական հրատարակութեանց մէջ (հմտ. Մանանայ) խնամքով ուզեց հաւաքել գանոնք: Տակաւին բոլոր դար մը լըրցաւ երբ Արխատակէս վ. Տէվկանցի իմբացրութեամբ առաջին անգամ լոյս տեսաւ առանձին հատոր մը՝ Հայերգ կոչուած, որ Միջին դարու բանաստեղծութիւնները կը բովանդակէր:

Հ. Ալիշան գուրգուրաց Նահապետ Գուշակի վրայ, ինքզինքը Նահապետ անունով կեղծեց և այնպէս երգեց իր աշխարհարքեր թերթուածները, « Ի՛նչ գաս իմ լուսնակ»-ը, և այլն. և ինքն եղաւ առաջին անգամ՝ որ Եւրոպացոց հայ գրականու թենէն նույշներ տալու համար Միջնա-

դարեան բանաստեղծութեանց բանի մը նշխարները հրատարակեց զանոնք անգլիերենի թարգմանելով:

Եւ ինչպէս պարագեցաւ Պ. Կ. Կոստանեանց, որ և հրատարակեց առանձին հատորներով Յովհ. Թլկուրեանցոյ, Մկրտիչ Նաղաշի, Գր. Ալթամարցոյ թերթուածները և ուրիշ չորս պրակներ «Երբ ժողովածու» տիտղոսով:

Երջան մ'եղաւ որ Հանդէսները և Լրագիրները լռեցին և մոռցան նիւթովս պարաւելու: Ա. Չոպանեան իր գրական Հանդէսին Անահիտի մէջ տեղ տուաւ «Հայ էջեր»-ու և ուզեց մարած կրակը արծարծի. բայց մեզմէ ո՛վ պիտի հետաքրքրուէր անոնցմով. ո՛վ պիտի կարենար աւագէն ազամանդի փշուրները զատել: Չոպանեան թերեւս յուսահատած ֆանսերորդ դարու Հայուն՝ Տաննահիլեգերորդ դարու Հայր ճանչցնելու և գնահատել տալու՝ փորձեց Եւրոպացոյն ներկայացնել հայ գրականութեան նշխարներ. Ֆրանսերենի թարգմանելով զանոնք՝ հատորով մը ի լոյս ընծայեց. Եւրոպացին գնահատեց արեւելեան բանաստեղծութեան այդ ճիւղը, որ տարբեր բան մ'էր անկից՝ ինչ որ ծանօթ էր իրենց, պարսիկ և արաբ գրականութենէն. և վարձատրեց աշխատասիրորդ: Մենք նորէն անտարբեր մնացինք:

Մեր մատենադարանի տաղերը հրատարակել ձեռնարկեցինք, և Մեծ. Հ. Ն. Ալիշան իրենց — Վիեննայի — վանքի տաղարանները ուսումնասիրել սկսաւ. ուրախ ենք՝ իմանալով որ Զարարա Գնունեաց եպիսկոպոսի Տաղերու հրատարակութենէն ետք ձեռնարկած է Գրիգոր Ալթամարցոյ տաղերու ամբողջական հրատարակութեան և անշուշտ պիտի շարունակէ գրադարան մը կազմել հայ Երգիչներու:

Պիտի զայ օր մը՝ որ պիտի հասկնանք՝ թէ մեր Միջին դարու թերթուածները հայ գրականութեան Ոսկեդարը կազմած են. շատ բան ունինք այդ դարերէն, բայց զըժրախտարար անհամեմատ կերպով շատ քիչ են ընտիր կտորները: Ոսկիի բով մը կը կազմեն Տաղարանները՝ որոնցմէ շատերը

մատենագրաններու մէջ կը փտտին. երբ դեռ աւելի՛ լուսաւորուինք՝ աւելի՛ պիտի զգանք անոնց կորստեան և ուսումնասիրուած չըլլալուն ցար:

Դերկայապէս մեր ազգը շատ ըիչ բանասէրներ ունի՝ որոնք նիւթովս գրադին. ժողովուրդը չի մտահար բանասիրական թերթի և յօդուածի. մանաւանդ կեանքի այս նոր շրջանին՝ յորում գրականութիւնը սե և ծանր մահարձանի մը տակ կը հանգչի, թողով որ իր դիմացէն անցնի ազգ մը կռուելով, իրար զիրար ջախջախելով...

Միջնադարեան հայ բանաստեղծութիւնը պէտք է ժողովրդականացնել. Բարձրագոյն վարժարաններու մէջ՝ ան պէտք է դասուանդութիւն ընդհանուր հայ մատենագրութեան նկատմամբ:

Դերկայիւս մենք նպատակ ունինք մեր ընթերցողաց ներկայացնել հայ լեզուի ներքին իրենց համառօտ և պարզ կենսագրութեամբ — որքան որ յայտնի է, — և միասին տալ նմոշներ անոնց քերթուածներէն՝ ստանց բազմաթիւ օրինակներու բազդատութիւնը ընելու:

Հայ Երգիչներու Երևուոյր.

Երգը մարդկութեան հետ ծնած է. նա աւելի կանուխ գոյութիւն ստացած է քան մատենագրութիւնը. ինչպէս ամէն ազգի՝ մեր մէջ ևս այնպէս եղած է: Հայ մատենագրութիւնը Գորգոս Երգերով կը սկսի: Սակայն շատ ըիչ բան ունինք մեր այդ անգիր գրականութենէն. և զարմանալին է որ հայ մատենագրութեան Ռսկեղարք մեզի չէ տուած ոչ մէկ կտոր բանաստեղծութիւն: Գրեցազներգութիւնը, վէպը՝ հեթանոս գրականութիւն նկատուած է մեր թարգմանիչներէն, Եղիշէներէն, Խորենացիներէն և նոյն գաղափարը դարէ դար փոխանցուած է:

Հայ բանաստեղծութիւնը իր ընդհանուր առումին մէջ՝ ես երկու մասերու բաժնած եմ, Եկեղեցական և Ժողովրդական կոչելով զանոնք:

Եկեղեցական կոչուած մասին մէջ պիտի

մտնեն Շարականները՝ որոնց ըիչ մաս մը չափաւ գրուած են, և ատոնցմէ՛ ամենահինն է Կոմիտաս կաթողիկոսի Անճիոյ Դուրեղիքը: Շարականները — արդէն շատ ծանօթ — կրնան ուսումնասիրութեան առարկայ չըլլալ:

Եկեղեցական բանաստեղծութեան բաժնին մէջ կը մտնեն Գրեցիչը, Տարբեր Մեղիկները. առաջինները որ մեծագոյն մասը կը կազմեն՝ ոտանաւոր և յանգաւոր գրուած՝ սուրբերու վարուց և Քրիստոսի սնորհութեանց համառօտ նկարագրներն են. Տարբեր նոյնպէս ոտանաւոր՝ սրբազան յարասութիւններ են. և Մեղիկները բանաստեղծական ազօրքներ և մաղթանքներ: Ասոնցմէ՛ աւելի հին են Այրարեցիքը:

Ընդհակառակն Ժողովրդական բանաստեղծութիւնը, որուն հիմն եղած է եկեղեցականը, — և որ մեր ուսումնասիրութեան նիւթն է, — աւելի վերջ, ԺԳ դարէն յետոյ երևան կու գայ: Եկեղեցոյ մէջ տաղաչափուած երգեցողութիւնը՝ կամաց կամաց սրբազան կամարներէն դուրս կ'ելլեն և ուրիշ գոյներով գոյութիւն կ'ունենան:

Բանաստեղծութեան քնարն է տաղաչափութիւնը, մանաւանդ յանգաւոր տաղաչափութիւնը:

Ինչպէս ըսի՝ մենք հին գրականութենէն տաղաչափեալ բանաստեղծութիւններ չունինք. և ունեցած պատարկնիւս վաւերական համարելու համար՝ պէտք է խորապէս ուսումնասիրենք: Մեր հին գրականութեան ամենէն մեծ միտքը և ամենէն զգայուն սիրտը Դարեկայ վանքին խղիկի մը մէջ ալրոզ, մութի անհունութեան մէջ խորասուզուող կրօնաւորին Գրիգորի նիհար մարմնին մէջ կեդրոնացած են, որ ձգած զաշխարհը՝ գիշերը իր յարկի երկրէի յաւանցոյցէն նայող իօսուեն աստղերու հետ կ'ալպրէր, և օրուան մէջ՝ իր պատուհանին դիմաց փոռուող Բնութեան հրաշքիքներով կը խանդավառուէր: Բանաստեղծութիւնը իր մէջ եռաց և դուրս պոռթկաց այն գեղեցիկ հատորով՝ որ այսօր Դարեկ կը կուչուի. և այդ վճռեց դարէ դար որ նա ալրի

հայ զբաղանութեան մէջ իբրև ամենէն մեծ ղէմբը:

Գրիգոր Նարեկացին ժ-ժՊ դարու մէջ ապրած ըլլալով՝ մեր զբաղանութեան թէ՛ առաջին և թէ՛ մեծ բանաստեղծը ճանչուած է. իր աղօթքները սաչպ տաղաչափեալ կը գրէ, ինչպէս իր տաղերը:

Նարեկացիէն վերջ տաղաչափեալ գրութիւններ հաղորդեցին մեզ Գրիգոր Մագիստրոս, դար մը վերջ՝ բեղուն և անուանի ջերթոքը Ներսէս Շնորհալի, որուն յաջորդներ և հետևողներ անպակաս եղանք և նոյն իսկ պատմիչներ՝ տաղաչափուած գրեցին իրենց գործերը, ինչպէս վահրամ Պահլաւունին, Սիմէոն Ապարանեցին և այլն, ու նաև ողորմելի յիշատակազրներ:

Նարեկացիէն առաջ՝ ապահովապէս ժողովրդական անգիր զբաղանութեան մէջ կ'ապրէր տաղաչափուած և յանգաւոր բանաստեղծութիւնը. «ստոնք՝ անշուշտ աշխարհիկ նիւթեր, սիրոյ երգեր, մեռելական յուսահատեցուցիչ ողբեր կ'երգէին. և վասն զի մեր նախնեաց քով գրիչը միայն կղերականաց ձեռքն էր, այդ պատճառաւ աւտոնք զրի չառնուեցան և դատապարտուեցան մեր հայրերէն. և կրօնական գրիչներէն ո՛չ ոք համարձակեցաւ յանգաւոր տաղաչափութեան մօտեցալ. յանցանք և մեղք էր իրենց համար այն քնարին վրայ երգել՝ որուն թելերը ժողովրդային աշխարհիկ և հեթանոս տողերը բամբակ էին:

Նարեկացին ևս զգուշացաւ, և իր ընդարձակ գրքին մէջ մէկ տեղ մը միայն երգեց այդ դատապարտուած քնարով — յանգաւոր տաղաչափութեամբ, — և իր միաբանակիցները չզգայթակեցնելու համար պէտք զգաց քանի մը տողով նախաբան մը դնելու: Նա կը գրէ «ԻՉ Բան»-ին սկիզբը. «Եւ արդ ստուգապէս և իրանաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկու

ղանացն և զբանիցն յարմարութիւն հանդերձն, ի հոյն գիր յերկաղ քասարտունես տակն, որովք առաւել սաստիկ մարմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն պրտին ըրձից առ արտասուացն ըրիմունս. ոչստի և յագմեալ իմ ի գրոյսս պարոս սկմբից դատս յայնր կրայսանոց՝ որք զրպիտցն յուսակակն յանուստեղծութիւն՝, և ես ընդ նոսին՝ նոցին հեծութեամբ աւաղական ձայնակցութեամբ զանձինս տարածանեմ ըզվշտակութիւնն՝»: Եւ մի քանի տող վերջ կը սկիբ յանգաւոր ոտանաւորով աղօթել կամ ողբալ, ամէն տող «ի» ձայնաւորով վերջացնելով:

Գրիգոր Մագիստրոս, աշխարհական առաջին հայ մատենագիրը, որ Նարեկացիէն քիչ վերջ երեցաւ, իր բանաստեղծութիւնքը յանգաւոր գրեց. առ Մանուչէ ուղղած 1016 տողեան ոտանաւորը՝ ամբողջութեամբ ին կը վերջացնէ:

Մեծ են գործք սատուածային,
սքանչելի նորա բանիկ
Հրաշալի, անպատմելի
յամենայնի զարմանալիկ, ևն:

Ուրիշ Ներբողեանները, քանի մը թրդթերն իսկ՝ որոնք հրատարակուած են վերոյիշեալ հատորիկին մէջ, իւրաքանչիւրին տողերը միտկերպ կը վերջացնէ կամ հալ կամ ևն:

ԺԻ-ԺԳ դարու տաղաչափութիւնք՝ Գրիգոր Մագիստրոսի «Մեծ են գործք» երկար ոտանաւորին նման միշտ նոյնայանգ են, բայց սա տարբերութեամբ՝ որ երբեմն ամէն հարիւր կամ երկու հարիւր տող վերջ ին վերջաւորութիւնը կալի կամ ողի կը փոխուի: Յանգերու այդ անվերջ կրկնութիւնը և նոյնութիւնը՝ այնքան ներդաշնակ չէ, հակառակ բանաստեղծներու ինքնագոհութեան: Նոյն միօրինակ յանգերն են՝ զորս Գրեհորու և Տապերու մէջ կը լսենք:

1. Պ. Քասիմ որ Նարեկը աշխարհաբար թարգմանեց (տպ. Պոլիս 1902), չգիտեմ ինչու այս ընդգծեալ տողերս դուրս թողած է (հմտ. էջ 123):

2. Զայս անդրադարձուց է. Ն. Անդրեկեան իր «Նարեկացին և հարեկը» յօդուածով (Հմտ. Բազմավեպ 1900) էջ 447, ծնթ. 1. Ե. Ն. Ա. ստորագրութեամբ):

Տարլաչափութեան ձևեր

Գանձերու և Տաղերու մէջ բազմաթիւ են Տաղաչափական ձևերը, յորոց մի քանին միայն կը նշանակենք . Ա. Հնգտանայ կամ միանդամայ, այս չափով գրուած են ընդհանրապէս Գանձերու մեծամասնութիւնը. ինչպէս Տէր Մխիթարայ «Գանձ Բուն Բարեկենդանին» .

«Երգս յաւեժական
Երգեմք բանական
Երիցդ միական
Ի նմանս անըման» և այլն :

Բ. Երկանդամայ, որոնք հետեւել ձեւերով կարելի է գտնել Գանձերու և Տաղերու մէջ ա 4-3, բ 4-4, գ 4-5, դ 5-2, և 5-5, յ 5-6 և այլն :

Գ. Եռանդամայ, հետեւել ձևերով . ա 3-3-3, բ 3-4-4, գ 4-4-4, դ 5-2-5, և 5-4-4 :

Դ. Քառանդամայ որ է հայրական տաղաչափութիւն կոչուածը :

Ե. Կան նաև ղնգանդամայ տողեր, թէև հազուադէպ :

Չ. Խառն, այսինքն տան մը առաջին տողը երկանդամայ կամ եռանդամայ, իսկ երկրորդ տողը միանդամայ կամ երկանդամայ, և այլն :

Այս նշանակուածները զեռ մի մասը կը կազմեն տաղաչափական այն բազմաթիւ ձևերուն՝ որոնք կան մեր ընթացիկներուն և բանաստեղծներուն ըով . և որոնք մի առ մի օրինակ բերելը պէտք է դուրս նկատենք մեր ներկայ գործին ծրագրէն :

Հ. Մ. Պատրիստ



ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ԵՐԿՄՈՒՆԵՔ ԳԻՒԱՅ ԵՒ ԱՄՏԻՅ՝

Ե. ԵՐԿՄՈՒՆԵՔ ՀԻՒԱՆԳԱՅ

Նկատեցինք վերև (369), թէ հին ազգեր և Հայերն իսկ մարմնական խօթութիւնքն ու սովորական երևոյթները դեւական ազդեցութեանց կ'ընծայէին : Մեր ըով յարատեւեց այդ համոզումը շատ ընդարձակ սահմանի մը մէջ, և անոնց խափանման համար յատուկ դարմաններ անպակաս էին : Այդ նպատակաւ մեր յետին դարերուն, կամ զոնէ առաւելապէս այդ ժամանակի գրչազրաց մէջ, ի հրապարակ կու գան երզնեցուցման բազմաթիւ ու կախարդակերպ գրուածներ, ճապարակած Ախտարը անուամբ ծանօթ գրոց մէջ : Անոնց արհամարհութեամբ մը նայուած էր ցարդ՝ մինչդեռ այն դերը՝ զոր կատարեր են ազոնք, աւելի մտադրութիւն մը կը պահանջէր՝ մեր հարց կրօնից պատմութեան տեսակետով :

1. — Կիլգրիստուս — Յիշեալ գրուածներէն շատ օրինակներ կը պահէ վանացս մատենադարանը, բոլորն ալ նորագիր ու նոր և այլազան բովանդակութեամբ, բաց ի միոյն՝ որ գաղափարուած է ՋԼԳ (1484) թուականին², ու գրչէն սահմանուած՝ «սուրբ թշկականս որ կոչի Կիլգրիստուս» . — կոչում մը՝ որ անուած է համանուն սրբոյն ընծայուած կրկին աղօթքներէն՝ որ կան անոր մէջ . — և որ իւր առաւելագոյն հնութեան համար կարելի է արժանի է մեր առանձին ուշադրութեան, իբր հարազատագոյն ներկա-

1. Տես և յէջ 49, 107, 257, 321, 369.
2. Հ. Ղ. Աւետիս, Հին հատար, ԺԱ, 408-9.
3. Փոքրիկ մատան մը, 9, 4 X 6, 5 հրք. տարածութեամբ և 94 թերթով . — Այս ընտիր գրչագիրը վերիպած կը թուի Հ. Աւետիսի ուշադրութեան : Հին հատարը ուսումնասիրութեան մէջ, ուր ոչ միայն չէ զգուշանալ անտի, այլ անունն ալ սխալագիր օրինակէ ասած՝ «Կպրիստուս» կը գրէ (ԺԱ, 402, Դ). Թոյ ուրիշ կարեւորագոյն սարգերութիւնքը :